



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
 Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (3741) 563363, 580219, 094 40 46 24,
 E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

HQ-17-06/13

24.07.2017թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
 Աշոտ Միսնյանին

Հարգելի՛ պրն. Միսնյան

Ա.թ. հուլիսի 17-ին հրապարակել ենք նյութ՝ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի ավազանու վերջին երկու տարիների որոշումների մասին: Որոշումներում ավազանու անդամները, օրենքի խախտմամբ, իրենք իրենց հարկային և գույքային արտոնություններ են տվել, մասնակցել այդ որոշումների քվեարկությանը և կողմ քվեարկել: (տե՛ս հղումը այստեղ՝ <http://hetq.am/arm/news/80677/ashtaraki-avaganu-andamnery-koxm-en-qvarkel-irenc-artonutyun-talu-oroshumnerin.html>)


«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Արդյո՞ք մարզպետարանը ուսումնասիրել է նյութում առկա փաստերը և ի՞նչ քայլեր է ձեռնարկել:

Կանխավ շնորհակալ եմ՝


Դիանա Ղազարյան

24 հուլիս 2017



Աշտարակի ավագանու անդամները կողմ են քվեարկել իրենց արտոնությունն տալու որոշումներին /17.07.2017/

Դիանա Ղազարյան



19:20, 17 հուլիսի, 2017

Աշտարակի ավագանու անդամները վերջին երկու տարիներին, օրենքի խախտմամբ, իրենք իրենց հարկային և գույքային արտոնություններ են տվել, մասնակցել այդ որոշումների քվեարկությանը և կողմ քվեարկել:

Նախկին և ներկա քաղաքապետերը ևս ավագանու անդամների օգտին որոշումներ են կայացրել՝ աճուրդով հողեր օտարել:

Օրինակ՝ նախորդ տարվա դեկտեմբերի 13-ին Աշտարակի ավագանին որոշել է որոշ աշտարակցիների գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տրամադրել:

Այդ ցանկում հայտնվել են նաև ավագանու անդամներ Նորիկ Անդրեասյանը, Աշոտ Հունանյանը և Նավասարդ Պետրոսյանը:

Երեք անդամները միասին ստացել են գույքահարկի մոտ 122 հազար դրամի արտոնություն: Մասնավորապես՝ Անդրեասյանը ստացել է 70 000, Հունանյանը՝ 22 000, իսկ Պետրոսյանը՝ 29 844 դրամի արտոնություն: Նիստին մասնակցել են նաև ավագանու այս անդամներից Աշոտ Հունանյանը և Նավասարդ Պետրոսյանը, ովքեր կողմ են քվեարկել իրենց՝ գույքահարկի արտոնություն տալու որոշմանը:

Հ/Հ	Անուն	Հայրանուն	Ազգանուն	Գույքահարկ	Հողի հարկ
1	Հրայրյա	Հակոբի	Աղումյան	100 000,00	
2	Նորին	Սիմոնի	Անտոնասյան	70 000,00	
3	Անուշ	Ավետիսի	Թամազյան	11 525,00	18 200,00
4	Էդուարդ	Արամայիսի	Վարսանյան	20 880,00	
5	Սուրեն	Վահանի	Խորենյան	60 000,00	
6	Վաչագան	Երջանիկի	Սողոմոնյան	70 000,00	
7	Անահիտ	Սարգսի	Գասպարյան	12 624,00	11 238,00
8	Գառնիկ	Կառլենի	Բաղդասարյան	12 973,00	18 305,00
9	Աղավնիկ	Արտաշի	Գյուլասարյան	14 976,00	
10	Վահագն	Գարեգինի	Գորգյան	4 863,00	
11	Արտաշ	Արծրունի	Թումանյան	66 996,00	
12	Սերգեյ	Վալերի	Ասկարյան		14 255,00
13	Խայիկ	Գագիկի	Միքայելյան	35 378,00	
14	Մարինե	Ռազմիկի	Մայիասյան	526 858,00	
15	Հայկ	Վոլոդյայի	Սարգսարյան	30 000,00	
16	Լիլիթ	Ազատի	Թումանյան	80 000,00	
17	Սրբունի	Ասատուրի	Սարգսարյան	63 000,00	
18	Աշոտ	Դանիելի	Հունանյան	22 000,00	
19	Սամվել	Ռաֆիկի	Վևորգյան		13 400,00
20	Թինա	Հրայրայի	Խայատոյան	53 000,00	8 700,00
21	Գուրգեն	Սերգեյի	Հովհաննիսյան		44 500,00
22	Հովիսիմե	Արմենակի	Ազատյան	16 000,00	
23	Գագիկ	Սեդեգի	Սարգսյան	35 000,00	
24	Մարիգա		Կարանդակյան	25 028,00	
25	Վազգեն	Հովհաննեսի	Հովհաննիսյան	40 241,00	10 413,00
26	Ամասիա	Ռոբերտի	Մաղաքյան	150 000,00	
27	Աննա	Կառլենի	Պետրոսյան	50 583,00	5 922,00
28	Սամվել	Նավասարդի	Մանուկյան		3 688,00
29	Նավասարդ	Սամելի	Պետրոսյան	29 844,00	
30	Ղազար	Չոխոսի	Մառգարյան	46 929,00	
31	Բերա	Սաուհի	Սահառյան	23 181,00	

ԱՎԱԳԱՆԻ՝

ԿՈՂՄ - 12

ԴԵՄ - 0

ՁԵՌՆԱԳԱԴ - 0

ԿԱՐԵՆ ԵԱԶԱՐԻՑՅԱՆ

ՄԱՍՊԵՆ ԵՈՒՊՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՐԲԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍՏԱՐԴ ԳԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱԵՆՍ ԽԱԶՍՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԳ ՄԱՐԳՍՅԱՆ

ԱԵՈՏ ՀՈՒՆԱՐՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱԶԱԳՆ ՄՎԻՏՅԱՆ

ՄԱՐԻԲԵԳ ՕՎՈՅԱՆ

ՎԱԶԵՆ ՄՈՎՍՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱԵՉՅԱՆ

2. Անդրադասարկել չի մասնակցել քվեարկությանը:

Սա «Տեղական ինքնակառավարման մարմինների» մասին օրենքի խախտում է, քանի որ օրենքը հստակ սահմանում է՝ ավագանու անդամը չպետք է մասնակցի ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների եւ մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին:

Ավագանու անդամները արտոնություն են ստացել նաև 2015 թվականին:

Օրինակ՝ 2015 թվականի հոկտեմբերի 8-ի ավագանու որոշմամբ՝ ավագանու անդամ Վահագն Մկրտչյանը ստացել է 150 000 դրամ հարկային արտոնություն: Մկրտչյանը ևս մասնակցել է ավագանու նիստին և իրեն արտոնություն տալու որոշմանը կողմ քվեարկել: Սա կրկին վերջ նշված օրենքի խախտում է, քանի որ ավագանու անդամը չի կարող մասնակցել իր հետ առնչվող որոշման քվեարկությանը: Վահագն Մկրտչյանը Աշտարակի քաղաքապետարանի ինսթրակտներից է: Նա ավագանու անդամ է 1999 թվականից՝ արդեն 18 տարի:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

- Աշտարակ քաղաքի բնակիչ Վահագն Մկրտչյանին տալ հարկային արտոնություն 150 000 ՀՀ դրամի չափով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԳՕՂՄ-10

2007-0

2007/ԱԱԱ - 0

ԱՆՂԵԱՍՅԱՆ ԿՈՐԿ

ՇԱՀԱՏՔՅԱՆ ԿԱՐԵՆ

ԳԱԼՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՀՈՒՆՈՒՅԱՆ ԱՇՈՏ

ՔԱՍՅԱՆ ՍՅՅՈՂԱ

ՂԱԼԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՎՈՅԱՆ ՍԱՐԴԵԿ

ՄԿՐՏՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՏԱԷՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

Այս որոշումից երկու ամիս անց Մկրտչյանը գույքահարկի 8,900 դրամ արտոնություն է ստացել: Նույն օրվա Նիստին 105 600 դրամ գույքահարկի արտոնություն է ստացել Նան ավագանու մյուս անդամ Տիգրան Գալստյանը:

Նրանք կրկին մասնակցել են իրենց արտոնություն տալու որոշման քննարկմանը և կողմ քվեարկել որոշման նախագծին:

13			
14	Գոհար Հակոբյան		
15	Հարություն Մուրադյան		
16	Արմեն Պարսյան		
17	Գևորգ Գրիգորյան		
18	Վարդիթեր Մակարյան		
19	Թազուշ Բոցիկյան		
20	Գրիգոր Վիրաբյան		
21	Մեխակ Հարությունյան		
22	Տիգրան Գալստյան		
23	Գալուստ Դոնախյան		

ԱՎԱԳԱՆԻ

ԿՈՂՄ - 10

767-0

2601/011 - 0

ԱՐԴՐՈՒՄՆԱԿ ԼՈՐԻ

ԳԱԼՍՏՅԱՆ ՏՐԳՐԱ

ՂԱԼԱՑՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՉՅԱՆ ՎԱՅՐԱ

ՆԱԿԱՅԵՑՅԱՆ ԱՐՔՈՒՐ

ԵՒԼԱՑՔՈՑՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՔԱՍՅԱՆ ՄՅՁՈՒԱ

ՕՎՈՑՅԱՆ ՄԱՐԻՔԵՎ

ՏԱՇՅԱՆ ՄՈՒՇԵՂ

Տիգրան Գալստյանը որոշումից մեկ շաբաթ անց՝ դեկտեմբերի 28-ին, ավագանու մյուս անդամ Լորիկ Անդրեասյանի հետ ավագանու կողմից կրկին գույքահարկի արտոնություն է ստացել: Գալստյանն այս անգամ ստացել է գույքահարկի 70 000 դրամի, իսկ Անդրեասյանը՝ 444.000 դրամի արտոնություն: Ավագանու անդամները, կրկին օրենքի խախտմամբ, մասնակցել են իրենց իսկ արտոնություն տալու հարցի քննարկմանը և կողմ քվեարկել:

49	Տաթև Դուրշուրյան		95467
50	Արմեն Եղիազարյան	56844	36698
51	Տիգրան Գալստյան	70000	
52	Լվեր Տոնոյան		36760

19	Ռոզա Պարզյան		17469
20	Լորիկ Անդրեասյան	444000	
21	Հովհաննես Սահակյան		26244

Աճուրդով հողեր՝ ավագանու անդամներին

2016-ից մինչ այս տարվա հունիս ամիս Աշտարակի քաղաքապետարանը աճուրդով համայնքային սեփականություն հանդիսացող 32 հող է օտարել:

Օտարման գործարքները կատարվել են և՛ Նախկին քաղաքապետ Արմեն Անտոնյանի, և՛ սեպտեմբերի 18-ի որոշմամբ քաղաքապետ ընտրված Թովմաս Շահվերդյանի օրոք:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը աճուրդով ձեռք են բերել Նաև ավագանու անդամները: Մասնավորապես՝ մեկուկես տարվա ընթացքում կատարված առքուվաճառքի գործարքներից կրկին օգտվել են ավագանու անդամներ Նորիկ Անդրեասյանը և Վահագն Մկրտչյանը:

Նրանք թեև հողամասերը ձեռք են բերել Նախկին քաղաքապետ Արմեն Անտոնյանի պաշտոնավորման ժամանակ, սակայն այդ ժամանակ ևս եղել են ավագանու անդամներ:

Մասնավորապես՝ հոկտեմբերի 18-ին համայնքի ղեկավար Արմեն Անտոնյանը որոշել է Տիգրան Մեծ փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 900 քմ հասարական նշանակության հողատարածքը առքուվաճառքով օտարել ավագանու անդամ Նորիկ Անդրեասյանին: Հողամասի վաճառքի գինը կազմել է 2 200 000 դրամ: Աճուրդին մասնակցել են երկու հոգի, սակայն հողամասը ձեռք է բերել ավագանու անդամը:

2016-ի հոկտեմբերի 10-ի մեկ այլ որոշմամբ՝ Անտոնյանը գյուղատնտեսական նշանակության հող է օտարել ավագանու մյուս անդամ Վահագն Մկրտչյանին, Պերճ Առաքելյանի և Արմեն Աղաբաբյանին: Վաճառքով օտարված հողամասի տարածքը կազմել է 0.8953 հա: Հողամասի մեկնարկային գինը եղել է 181 360 դրամ, իսկ նրանք այն ձեռք են բերել 199 500 դրամով:

Այս որոշումներից գրեթե երկու շաբաթ անց Արմեն Անտոնյանը այլևս համայնքի ղեկավար չի եղել, քանի որ հոկտեմբերի 24-ին նրան փոխարինել է նոր քաղաքապետ Թովմաս Շահվերդյանը:

Գլխավոր լուսանկարը՝ ashtarak.am-ի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 ր. Аштарак, В.Петросян 4, Тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, Tel /Fax (+374 232) 3 22 51 E-mail aragatsotn@mta.gov.am

-----N-----

**<<Հետաքննող լրագրողներ>> հասարակական
կազմակերպության լրագրող Դիանա Ղազարյանին**

Տեղեկացնում ենք Ձեզ, որ բարձրացված հարցի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Աշտարակ համայնքի ղեկավարի կողմից ավագանուն չեն ներկայացվել և ավագանու կողմից չեն սահմանվել համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լրագրությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը՝ խախտելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետը:

Չունենալով ավագանու կողմից ընդունված հիշյալ գործառույթը կարգավորող իրավական հիմքերը, տրամադրվել են դրամական օգնություններ, ինչպես նաև սահմանվել են հարկային արտոնություններ՝ խախտելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջները:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ համայնքի ավագանու անդամները մասնակցել են ավագանու որոշումների քվեարկությանը, որն առնչվում է իր կամ իր մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց շահերին՝ խախտելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը:

Հայտնաբերված խախտումների առնչությամբ ՀՀ Արագածոտնի մարզպետարանում և Աշտարակի համայնքապետարանում կազմակերպվել են քննարկումներ: Աշտարակ համայնքի ղեկավարը գտնվում է արձակուրդում: Աշխատանքի ներկայանալուց հետո թերությունները օրենսդրության պահանջներին համապատասխան վերացնելու համար հարցը կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը և օրենքով սահմանված կարգով կտրվի լուծում:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ